ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«07» ապրիլի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի տեղակալ

_____ Հ. Այունց

ԳԲԽ-37/17 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի 21.03.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 21.03.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Շիրակի մարզպետարանի կարիքների համար՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ռուսթավելի փողոցի մասնակի, Ախուրյան համայնքի Նոր Ախուրյան թաղամասի ճանապարհի մասնակի, Արթիկ համայնքի Գ. Նժդեհի փողոցի մասնակի, Տ-7-53, Հ-21-Փանիկ-Արևշատ-Հ-21 ավտոմոբիլային ճանապարհի (Փանիկ և

Սպանդարյան համայնքների տարածք) մասնակի և Տ-7-24՝ Հառիճ Նահապետավան-Հ21 ավտոմոբիլային ճանապարհի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/01» ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է մասնակցության հայտ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2017թ. կայացած նիստում թիվ 2 արձանագրությամբ «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, քանի որ Ընկերության փաստաթղթերը հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությունը Armeps համակարգը դիտել է որպես անվավեր (недействительные подписи):

«Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ն գտնում է, որ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունը և որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) և Կարգի խախտումներով, ինչը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից՝ վկայակոչելով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետով, Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետով և Կարգի 71-րդ կետով սահմանված պահանջները:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովը ճիշտ չի կատարել գործողությունները և ճիշտ չի գնահատել «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ն, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Ընթացակարգի հայտում ներառված փաստաթղթերը հաստատել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչը նաև հավաստել է կից ներկայացվող «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից 20.03.2017թ.-ին տրված 28/03.17 գրությամբ:

«Դուստր Մոնիկա» ՍՊԸ նշել է, որ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների ոչ իրավաչափությունը կայանում է նրանում, որ Կարգի

71-րդ կետով սահմանված պահանջներով գնահատող հանձնաժողովը պետք է ստուգեր մասնակցի ներկայացված տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից, այսինքն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից, ստացված տվյալներ, ինչը չի կատարվել: Այսինքն սույն պարբերությամբ նշված պայմանների կիրառման պարագայում Պատվիրատուն կտեղեկացվեր, որ «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ն Ընթացակարգի հայտում ներառված փաստաթղթերը հաստատել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ համաձայն Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջների, ինչն էլ հիմք կհանդիսանար գնահատող հանձնաժողովին Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների համաձայն հայտը գնահատել բավարար և «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ին 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջներով, իսկ վերջինիս դեպքում կպահպանվեն Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:

«Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ն խնդրել է՝ մասնակի դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2017թ. թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացրած որոշումները՝ «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի անբավարար ճանաչելու և մերժման մասով, կասեցնել ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ճանաչման գործընթացը:

Ընկերությունն, ի լրումն 21.03.2017թ. բողոքի, 23.03.2017թ. գրությամբ որպես բողոքով ներկայացված պահանջների լրացում խնդրել է՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով՝ դադարեցնել «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու մասին 21.03.2017թ. կայացված (հրապարակված 22.03.2017թ.) որոշումը և Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ կասեցնել նույն ծածկագրով հայտարարված բանակցային ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշումը:

2. ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Կենտրոնը 23.03.2017թ.-ին Պատվիրատուին ուղղարկված թիվ 02/04.1/1113-17 գրությամբ՝ խնդրել է եռօրյա ժամկետում տալ կարծիք «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/01» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ:

Պատվիրատուն 24.03.2017թ. թիվ 03/06.4/2227-17 գրությամբ պատասխանել է Կենտրոնի 23.03.2017թ. թիվ 02/04.1/1113-17 գրությանը և հայտնել, որ ՀՀ Շիրակի մարզպետարանը ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի թիվ 153-ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին իրականացվելիք ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ռուսթավելի փողոցի մասնակի, Ախուրյան համայնքի Նոր Ախուրյան թաղամասի ճանապարհի մասնակի, Արթիկ համայնքի Գ. Նժդեհի փողոցի մասնակի, Տ-7-53, Հ-21-Փանիկ-Արևշատ-Հ-21 ավտոմոբիլային ճանապարհի (Փանիկ և Սպանդարյան համայնքների տարածք) մասնակի և Տ-7-24՝ Հառիճ Նահապետավան-Հ21 ավտոմոբիլային ճանապարհի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է թիվ «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/01» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը (այսուհետ նաև՝ Ընթացակարգ)՝ 5 չափաբաժիններով:

Ընթացակարգի հրավերը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2017 թվականի մարտի 2-ի թիվ 2 որոշմամբ:

Գնման ընթացակարգը անցկացվել է էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով: Հրավերը հրապարակվել է նաև www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում: Ընթացակարգի հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի, ՀՀ ֆինանսների նախարարի 28 փետրվարի 2017 թվականի թիվ 72-Ա հրամանով հաստատած օրինակելի ձևի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Սահմանված ժամկետում բանակցային ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել թվով 8 կազմակերպություններ:

Հայտերի էլեկտրոնային ձևով բացումը և գնահատումը իրականացվել է հայտերի բացման նիստում, որը կայացել է 2017 թվականի մարտի 15-ին ժամը 10:00 -ին ՀՀ Շիրակի մարզպետարանում:

Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված հայտեր) ներկայացրել են բոլոր մասնակից կազմակերպությունները:

Մասնակիցներից «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած «Դուստր Մոնիկա» ՍՊԸ մասնակցել է միայն 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններին) փաստաթղթերը հաստատած էլեկտրոնային թվային ստորագրությունը Armeps համակարգը դիտել է որպես անվավեր (недействительные подписи): Հայտը 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով գնահատվել է անբավարար և մերժվել է (համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 9) ենթակետով սահմանված պահանջների):

Բոլոր հայտերը գնահատվել են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվել միայն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ ՀՀ Շիրակի մարզպետարանը 2017 թվականի մարտի 20-ին թիվ 02.2/2115-17 գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն թիվ «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/01» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հայտերի մերժման հիմքերի վերաբերյալ պարզաբանում ստանալու ակնկալիքով:

Թիվ «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/01» գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում և համակարգի միջոցով տրամադրվել բոլոր մասնակիցներին:

Պատվիրատուն հավաստել է, որ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները չեն հանգեցրել գնման գործընթացի մասնակիցների շահերի ոտնահարմանը:

Ի լրումն 24.03.2017թ. թիվ 03/06.4/2227-17 գրության՝ Պատվիրատուն 28.03.2017թ. թիվ 03/06.4/2306-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Շիրակի մարզպետարանի թիվ «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/01» ծածկագրով գնման բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2017 թվականի մարտի 15-ին կայացած հայտերի բացման նիստում անբավարար է գնահատել և մերժել է այն հայտերը, որոնցում մասնակցի հայտով

ներկայացված փաստաթղթերը հաստատած էլեկտրոնային թվային ստորագրությունը Armeps համակարգը դիտել է որպես անվավեր (недействительные подписи):

Պատվիրատուն նշել է, որ թիվ «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/01» ծածկագրով գնման բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները չեն հանգեցրել գնման գործընթացի մասնակիցների շահերի ոտնահարմանը և գտնում ենք, որ 2017 թվականի մարտի 21-ին «Դուստր Մոնիկա» ՍՊԸ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ ներկայացված բողոքը ենթակա է մերժման:

ՀՀ Շիրակի մարզպետարանը նույն հարցի վերաբերյալ 20.03.2017թ. թիվ 02.2/2115-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը (այսուհետ նաև՝ Նախարարություն):

Ի պատասխան Պատվիրատուի վերոհիշյալ գրության՝ Նախարարությունը 28.03.2017թ. թիվ 04/73-1/5407-17 գրությամբ հայտնել է, որ որ եթե էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված՝ մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերը նշված համակարգի կողմից դիտարկվում են որպես անվավեր, ապա տվյալ դեպքում մասնակցի հայտը ենթակա է մերժման՝ անկախ այդ փաստաթղթերը, բացի էլեկտրոնային թվային ստորագրությունից, նաև թվային ստորագրությամբ հաստատված և կնքված լինելու հանգամանքից:

3. ԳԲԽ-37/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-37/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/01» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցել է նաև «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2017թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, քանի որ Ընկերության հայտով ներկայացված փաստաթղթերը

հաստատած էլեկտրոնային թվային ստորագրությունը Armeps համակարգը դիտել է որպես անվավեր (недействительные подписи):

3. Կենտրոնը 05.04.2017թ. թիվ 02/04.1/1333-17 գրությամբ դիմել է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին և խնդրել է ԳԲԽ-37/17 բողոքը քննող հանձնաժողովի կողմից «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի բողոքով որոշում կայացնելու նպատակով հայտնել՝ «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին Word ձևաչափով ներկայացված փաստաթղթերը (Ըստ 31.03.2017թ. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի գրության «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի էլեկտրոնային ֆայլը հասանելի է https://armeps.am/ppcm/bids/2017768/-1859.zip հղումով) համարվում են արդյո՞ք էլեկտրոնային ստորագրությամբ պատշաճ վավերացված, թե՝ ոչ: Եթե այո, ապա պարզաբանել՝ ինչու է «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը հաստատած էլեկտրոնային թվային ստորագրությունը www.armeps.am համակարգի կողմից համարվել անվավեր (документ содержит недействительные подписи) և պարունակում է «This document contains invalid signatures» գրառում

4. Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն 06.04.2017թ. թիվ 039/04.17 գրությամբ հայտնել է, որ 24.docx ձևաչափով էլեկտրոնային փաստաթղթերը ստորագրված են Սերժիկ Բասենցյանի, ՀԾՀ՝ 3208510187, էլեկտրոնային ստորագրությամբ:

Վերոնշյալ էլեկտրոնային փաստաթղթերը հաստատվել են վավեր էլեկտրոնային ստորագրությամբ 2017թ. մարտի 14-ին, ժամը՝ 18:27-18:50 սահմաններում, և ներառում են էլեկտրոնային ստորագրության անբաժանելի մասերը՝

- Էլ. ստորագրության ամսաթիվ/ժամ
- Էլ. հավաստագրի սերիա համար
- Էլ. հավաստագրի ակտիվ կարգավիճակ
- Էլ. ստորագրության վավերության ժամանակահատված

Ինչ վերաբերում է էլեկտրոնային ստորագրության անվավեր լինելու մասին «This document contains invalid signatures» գրառմանը, ապա վերջինս հայտնել է, որ գրառման պատճառները կարող են լինել տարբեր, և դրանք որոշելու համար յուրաքանչյուր դեպքում

անհրաժեշտ է կատարել ուսումնասիրություն: Առավել հաճախ նշված գրառումը հայտնվում է հետևյալ դեպքերում՝

- Եթե ԷԿԵՆԳ-ի հանրային հավաստագրերը տեղադրված կամ թարմացված չեն համապատասխան փաստաթուղթը ստուգողի համակարգչում,

- Word ծրագրային տարբերակի առանձնահատկությունները: Մասնավորապես՝ ավելի հին Word ծրագրային տարբերակով ստորագրված էլեկտրոնային փաստաթուղթը մեկ այլ անձի կողմից ավելի բարձր Word ծրագրային տարբերակի միջոցով ստուգելու դեպքում կարող է առաջացնել սխալի մասին գրառումը:

5. «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ն 07.04.2017թ. Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության 05.04.2017թ. թիվ 03/73-1/6183-17 գրությունը, որի համաձայն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն 06.04.2017թ. թիվ 038/04.17 գրությամբ Նախարարությանը հայտնել է, որ «*Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի հայտում առկա փաստաթղթերի էլեկտրոնային ստորագրությունները վավեր են և վերոգրյալով պայմանավորված տվյալ դեպքում Ընկերության հայտը ենթակա չե մերժման:*

<u>4. ԳԲԽ-37/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի 21.03.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Շիրակի մարզպետարանի 20.03.2017թ. թիվ 02.2/2115-17, 24.03.2017թ. թիվ 03/06.4/2227-17 և 28.03.2017թ. թիվ 03/06.4/2306-17 գրությունները, ՀՀ ֆինանսների նախարարության 28.03.2017թ. թիվ 04/73-1/5407-17, 05.04.2017թ. թիվ 03/73-1/6183-17 գրությունները, «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի 31.03.2017թ. գրությունը, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի 20.03.2017թ.-ին տրված 28/03.17, 06.04.2017թ. թիվ 038/04.17 և 06.04.2017թ. թիվ 039/04.17 գրությունները, Շիրակի մարզպետարանի կողմից հայտարարված «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի հրավերը

(այսուհետև նաև՝ Հրավեր), գտնում ենք, որ «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի 21.03.2017թ. ներկայացրած բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Ընդ որում, տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) ***հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերի, որոնց ժամանակ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով

փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 71-րդ կետով սահմանված է, որ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն:

ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից «ՇՄ ԲԸՀԱՇՁԲ 17/01» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցել է նաև «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2017թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, քանի որ Ընկերության հայտով ներկայացված փաստաթղթերը հաստատած էլեկտրոնային թվային ստորագրությունը Armeps համակարգը դիտել է որպես անվավեր (недействительные подписи):

Կենտրոնը 05.04.2017թ. թիվ 02/04.1/1333-17 գրությամբ դիմել է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին և խնդրել է ԳԲԽ-37/17 բողոքը քննող հանձնաժողովի կողմից «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի բողոքով որոշում կայացնելու նպատակով հայտնել՝ «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին Word ձևաչափով ներկայացված փաստաթղթերը (Ըստ 31.03.2017թ. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի գրության «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի էլեկտրոնային ֆայլը հասանելի է https://armeps.am/ppcm/bids/2017768/-1859.zip հղումով) համարվում են արդյո՞ք էլեկտրոնային ստորագրությամբ պատշաճ վավերացված, թե՝ ոչ: Եթե այո, ապա պարզաբանել՝ ինչու է «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը հաստատած էլեկտրոնային թվային ստորագրությունը www.armeps.am համակարգի կողմից համարվել անվավեր (документ содержит недействительные подписи) և պարունակում է «This document contains invalid signatures» գրառում

Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն 06.04.2017թ. թիվ 039/04.17 գրությամբ հայտնել է, որ 24.docx ձևաչափով էլեկտրոնային փաստաթղթերը ստորագրված են Սերժիկ Բասենցյանի, ՀԾՀ՝ 3208510187, էլեկտրոնային ստորագրությամբ:

Վերոնշյալ էլեկտրոնային փաստաթղթերը հաստատվել են վավեր էլեկտրոնային ստորագրությամբ 2017թ. մարտի 14-ին, ժամը՝ 18:27-18:50 սահմաններում, և ներառում են էլեկտրոնային ստորագրության անբաժանելի մասերը՝

- Էլ. ստորագրության ամսաթիվ/ժամ
- Էլ. հավաստագրի սերիա համար
- Էլ. հավաստագրի ակտիվ կարգավիճակ
- Էլ. ստորագրության վավերության ժամանակահատված

Ինչ վերաբերում է էլեկտրոնային ստորագրության անվավեր լինելու մասին «This document contains invalid signatures» գրառմանը, ապա վերջինս հայտնել է, որ գրառման պատճառները կարող են լինել տարբեր, և դրանք որոշելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է կատարել ուսումնասիրություն: Առավել հաճախ նշված գրառումը հայտնվում է հետևյալ դեպքերում՝

- Եթե ԷԿԵՆԳ-ի հանրային հավաստագրերը տեղադրված կամ թարմացված չեն համապատասխան փաստաթուղթը ստուգողի համակարգչում,

- Word ծրագրային տարբերակի առանձնահատկությունները: Մասնավորապես՝ ավելի հին Word ծրագրային տարբերակով ստորագրված էլեկտրոնային փաստաթուղթը մեկ այլ անձի կողմից ավելի բարձր Word ծրագրային տարբերակի միջոցով ստուգելու դեպքում կարող է առաջացնել սխալի մասին գրառումը:

«Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ն 07.04.2017թ. Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության 05.04.2017թ. թիվ 03/73-1/6183-17 գրությունը, որի համաձայն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն 06.04.2017թ. թիվ 038/04.17 գրությամբ Նախարարությանը հայտնել է, որ *«Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի հայտում առկա փաստաթղթերի էլեկտրոնային ստորագրությունները վավեր են և վերոգրյալով պայմանավորված տվյալ դեպքում Ընկերության հայտը ենթակա չե մերժման:*

Այսպիսով Կենտրոնը գտնում է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի հայտը, էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չլինելու հիմքով, մերժելու արդյունքում խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետով, Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետով և Կարգի 71-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը առաջարկում է «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի 21.03.2017թ.-ի բողոքը բավարարել՝ դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 15.03.2017թ. թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացրած «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար ճանաչելու և մերժելու մասին որոշումները և դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու մասին 21.03.2017թ. կայացված (հրապարակված 22.03.2017թ.) որոշումը:

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Ռ.Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝
ԳԲԽ-37/17 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Մկրտչյան